Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ
_____ Ն.Խ.Սարիբեկյան

«21» 08 2020թ.

ԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում են «Ավանդական բժշկության համալսարանի» (այսուհետ՝ Համալսարան) արտակարգ դրության պայմաններում անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի հեռավար (առցանց) եղանակով օտարերկրյա դիմորդների ընդունելության գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝

1. ՀՀ Կառավարության 2020 թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N298-Ն որոշումը:
2. ՀՀ Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» N 700-Ն որոշումը:
3. ԱԲՀ-ի «Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը», սույն կարգը և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր:

II. Դիմորդների գիտելիքների ստուգումը

2.1. Դիմորդների գիտելիքների ստուգումն իրականացվում է ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված հեռավար ձևաչափով՝ օգտագործելով ZOOM հարթակը, որը համապատասխանում է ստորև նշված պայմաններին:

2.2. Գիտելիքների ստուգման հանձնաժողովը գտնվում է Համալսարանում հատուկ կահավորված լսարանում՝ պահպանելով սոցիալական հեռավորություն:

2.3. Գիտելիքների ստուգմանը մեկ օրվա ընթացքում կարող են մասնակցել առավելագույնը 25 դիմորդ:

2.4. Նախապես հաստատված ժամանակացույցը (օրը, ժամը մասնակիցների անունները) առնվազն 5 օր առաջ էլեկտրոնային տարբերակով ուղարկվում է բոլոր դիմորդներին:

2.5. Դիմորդների գիտելիքների ստուգումը կազմակերպվում է միջնակարգ կամ հիմնական կրթական ծրագրի սահմաններում՝ հարցազրույցի կամ բանավոր քննությունների տեսքով:

2.6. Ընդունելության գիտելիքների ստուգումը իրականացվում է՝

- Օտար լեզու (անգլերեն) պարտադիր
- Կենսաբանություն կամ քիմիա առարկաներից:

2.7. Ելնելով հեռավար ուսուցման առանձնահատկությունից՝ այն կազմակերպվում է մեկ ձևաչափով՝ բանավոր (տոմսը պարունակում է 3 հարց նախնական տեսական գիտելիքներից):

2.8. Գիտելիքների ստուգման ժամանակ դիմորդը բանավոր ընտրում է տոմսը, որից հետո այն տեղադրվում է էկրանին:

2.9. Դիմորդին տրվում է առավելագույնը 20 րոպե ժամանակ հարցերին պատրաստվելու և պատասխանելու համար:

2.10. Գիտելիքների ստուգմանը պարտադիր է դիմորդի ներկայությունը՝ տեսակապի միացմամբ: Քննության ամբողջ ընթացքում դիմորդը պարտավոր է տեսադաշտում պահել իր սեղանը և ձեռքերը:

2.11. Գիտելիքների ստուգման ընթացքում որևէ պատճառով էկրանի անջատման կամ տեսակապից դուրս գալու դեպքում դիմորդին տրվում է ևս մեկ հնարավորություն նոր տոմս ընտրելու, պատրաստվելու և պատասխանելու նոր հարցադրումներին: Չբավարարելու դեպքում քննությունը համարվում է չհանձնած:

2.12. Քննության ընթացքում դիմորդը իրավունք չունի օգտվելու այլ տեղեկատվական աղբյուրներից և պարտավոր է պահպանել ակադեմիական ազնվությունը:

2.13. Դիմորդների գիտելիքների ստուգումների արդյունքների հիման վրա դիմորդները կարող են ընդունվել ԱԲՀ-ի առաջին կուրս:

2.14. Դիմորդի գիտելիքների գնահատման վարկանիշային միավորների սանդղակ.

Գնահատական	10 բալանոց սանդղակ	100 միավորանոց սանդղակ	ԱԲՀ-ում Գործող գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	10	96	96-100	A+
	9	90	90-95	A
«լավ»	8	80	80-89	B+
	7	70	70-79	B
«բավարար»	6	60	60-69	C+
	5	51	51-59	C
«անբավարար»	1-4	50 և ցածր	50 և ցածր	D